

## ԿԸՀ 2022 թ. Հայաստանի և այլ երկրների արդյունքները


**Հայաստանի** ԿԸՀ 2022թ. արժեքը նախորդ տարվա համեմատ զգալիորեն նվազել է և հավասար է **46-ի՝ 3** միավորով պակաս նախորդ երկու տարիների (**49** միավոր) արժեքից՝ 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակի վրա: 2022թ. Հայաստանի ԿԸՀ չափման ստանդարտ սխալի չափը հավասար է 2.47-ի (2021թ.-ին այն հավասար էր 3.76-ի): Ինչպես նշվում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի Արևելյան Եվրոպայի և Միջին Ասիայի տարածաշրջանային վերաբերյալ վերլուծության մեջ. «Մի քանի տարի առաջընթաց գրանցելուց հետո, 2022թ.-ին Հայաստանի ԿԸՀ-ն երեք միավորով նվազել է, ինչն անհանգստացնող է: Թեև այս նահանջը վիճակագրորեն նշանակալի չէ, այն արտացոլում է զսպումների և հակակշիռների պահպանման, իրավապահ մարմինների բարեվարքության, դատական համակարգի անկախության ապահովման և քաղաքացիական տարածքի պաշտպանության հարցերում առկա հետընթացը:»

2022թ.-ի Հայաստանի ԿԸՀ-ի հաշվարկի համար օգտագործված տվյալների աղբյուրների մասին տե՛ս «**2022 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը հաշվարկելու համար օգտագործված աղբյուրները**» նյութը: Հարկ է նշել, որ Հայաստանի ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվել են այն նույն աղբյուրները, ինչ նախորդ երկու տարիներին՝ 2020 և 2021 թվականներին: Այդ աղբյուրներն են Բերթելսմանի հիմնադրամի 2022 թ. տրանսֆորմացիոն համաթիվը (**BF (TI)**), Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող պետություններ 2022թ. զեկույցի **Կոռուպցիա** ենթահամաթիվը (**FH**), Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2021թ. վարկանիշը (**GI**), Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2022թ. Ուղեցույցը (**PRS**), Ժողովրդավարության բազմազանության

ծրագրի (VDEM) 2022 թ-ի հրապարակումը և Համաշխարհային տնտեսական ֆորումի (WEF) Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման 2021թ. հրապարակումը:<sup>1</sup>

**Գծապատկեր 1**-ում ներկայացված են Հայաստանի ԿԸՀ արժեքները 2012թ.-ից մինչև 2022թ. ընկած ժամանակահատվածում: Ընթերցողների ուշադրությունը կառաջարկելիք հրավիրել Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության նախորդ, երկու միջոցառումների ծրագրերի (2015-2018թ. և 2019-2022թթ.) ժամանակահատվածներում Հայաստանի ԿԸՀ արժեքների վրա:


### Գծապատկեր 1.



<sup>1</sup> Տվյալ երկրի ԿԸՀ համաթիվը հանդիսանում է այդ երկրի համաթիվը հաշվարկելու համար օգտագործված բոլոր աղբյուրների համար հաշվարկված համաթվերի միջին թվաբանականը: Մասնավորապես, Հայաստանի ԿԸՀ 2022թ. համաթիվը (46) հավասար է վերը նշված աղբյուրների համաթվերի միջին թվաբանականին:

180 երկիր ներառող ԿԸՀ դասակարգման 2022 թ. աղյուսակում Հայաստանը Ռումինիայի հետ կիսում է 63-ից 64-րդ տեղերը (2021 թ.-ին Հայաստանը 49 միավորով 180 երկրների շարքում կիսում էր 58-ից 61-րդ տեղերը): **Գծապատկեր 2**-ում ներկայացված են աշխարհի մի շարք երկրների, ներառյալ Հայաստան 2022 ԿԸՀ արժեքները:

# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱՆՄԱՆ ՀԱՄԱԹԻՎ 2022



Ինչպես և նախորդ երեք տարիներին, Հայաստանի ԿԸՀ արժեքը 2022 թվականին ևս ավելի բարձր է ԿԸՀ համաշխարհային միջին արժեքից, որը, ինչպես և անցյալ տարի, հավասար է **43**-ի: Միևնույն ժամանակ ցածր լինելով ԿԸՀ այն արժեքից (50), որից ցածր ԿԸՀ արժեք ունեցող երկրներում, համաձայն հակակոռուպցիոն փորձագետների, կոռուպցիան հանդիսանում է լուրջ հիմնահարց: Այն նաև գերազանցում է իր հարևան երկրների (բացի Վրաստանից) և ԵՄՄՄ մյուս բոլոր երկրների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան և Ղրղզստան) 2022 ԿԸՀ արժեքներից: Բնականաբար, բացի **Վրաստանից**, որը 2022 ԿԸՀ համաշխարհային դասակարգման աղյուսակում զբաղեցնում է Հայաստանից ավելի բարձր տեղ (այդ աղյուսակում այն կիսում է **41**-ից **44**-րդ տեղերը), նշված բոլոր

երկրները այդ նույն դասակարգման աղյուսակում զբաղեցնում են Հայաստանից շատ ավելի ցածր տեղեր: Մասնավորապես, իր մյուս հարևաններից Թուրքիան կիսում է 101-ից 109-րդ տեղերը, **Իրանը՝ 147-ից 149-րդ տեղեր**, իսկ **Ադրբեջանը՝ 157-ից 161-րդ տեղերը**: ԵԱՏՄ երկրներից **Բելառուսը** զբաղեցնում է 91-ից 93-րդ տեղերը), **Ղազախստանը՝ 101-ից 109-րդ տեղերը**, **Ռուսաստանը՝ 137-ից 139-րդ տեղերը** և **Ղրղզստանինը՝ 140-ից 141-րդ տեղերը**:

Միևնույն ժամանակ, այդ նույն Գծապատկերից երևում է նաև, որ Հայաստանը դեռևս շատ անելիքներ ունի, որպեսզի հասնի ԿԸՀ բարձր արժեքներ ունեցող երկրներին: Այդ երկրների փորձի լուրջ ուսումնասիրությունը և տեղայնացված կիրառումը ( ոչ թե կրկնօրինակումը) շատ իրատեսական կարող են դարձնել Հայաստանի առաջընթացը կոռուպցիայի դեմ պայքարում:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ՝ Հայաստանը, ներառված է Արևելյան Եվրոպա –Կենտրոնական Ասիա տարածաշրջանի մեջ: Աղյուսակ 1-ում բերված է Արևելյան Եվրոպա –Կենտրոնական Ասիա տարածաշրջանի 2021թ. ԿԸՀ դասակարգման աղյուսակը՝ ներառյալ նրա բոլոր երկրների բոլոր աղբյուրների հաշվարկված համաթվերը:

**Աղյուսակ 1.**

**Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 2021թ. ԿԸՀ արժեքները**

Երկրի դիրք	Երկիր	2022 թ. ԿԸՀ արժեքը	Աղբյուրների թիվը	AFDB	BF(SGI)	BF(TI)	EIU	FH	GI	IMD	PERC	PRS	VDEM	WB	WEF	WJP
41	Վրաստան	56	6			45		50	47				68		65	58
63	Հայաստան	46	6			45		44	47			32	55		53	
65	Մոնտենեգրո	45	5			53		44	47				45		38	

84	Կոսովո	41	6			37		36	35				56	43		38
85	Հյուսիսային Մակեդոնիա	40	7			45	37	47	47				27		36	40
91	Բելառուս	39	7			33	37	27	47			24	51			53
91	Մոլդովա	39	8			33	37	36	47			39	53		32	36
101	Ալբանիա	36	8			41	37	42	35			32	27		42	29
101	Ղազախստան	36	9			33	20	24	47	56		67	18		26	37
101	Սերբիա	36	8			37	37	47	35			32	29		41	32
101	Թուրքիա	36	9		26	37	37		47	46		32	25		43	35
110	Բոսնիա և Հերցոգովինա	34	7			37	37	44	35				22		23	37
116	Ուկրաինա	33	8			37	20	36	35			41	30		35	33
126	Ուզբեկստան	31	8			29	20	24	35			41	25	35		37
137	Ռուսաստան	28	8			25	20	24	35			24	26		43	32
140	Ղրղզստան	27	7			29		27	22				20	35	27	26
150	Տաջիկստան	24	6			17		21	22				19	18	44	
157	Ադրբեջան	23	6			29	20	21	35			24	12			
167	Թուրքմենստան	19	5			17	20	21	22				15			

Ինչպես երևում է աղյուսակից, տարածաշրջանի 19 երկրների շարքում Հայաստանը, ինչպես նախորդ երկու տարիներին, զբաղեցնում է **2-րդ** տեղը: Այս տարածաշրջանում Հայաստանը, զիջում է միայն իր հարևան ***Վրաստանին***, որի ԿԸՀ 2022թ. արժեքն է **56**: